## 2. ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՄ ԴԻՄՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱԿՏԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ



**Դատարանի և պետական մի շարք մարմինների և այլ կազմակերպությունների միջև հաղորդակցումը**

*Դատարանը սնանկության (սնանկության վտանգի) վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ուղարկում է՝*

*պարտապանի պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով*

*գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնին, ինչպես նաև կենտրոնական դեպոզիտարիա՝ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով*

*հարկային մարմնին՝ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառումն ապահովելու նպատակով, ինչպես նաև պարտապանի կողմից մաքսային սահմանով իրականացվող ապրանքների տեղափոխումը կասեցնելու նպատակով՝ մաքսային մարմիններին*

*Կենտրոնական բանկին՝ առևտրային բանկերին և այլ վարկային կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու նպատակով:*

*հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումների կիրառումն ապահովելու համար: Սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումն ստանալու պահից դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը կասեցնում է պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ բոլոր կատարողական վարույթները:*

*պարտապանին լիցենզիա տված կամ ընդերքօգտագործման իրավունք տրամադրած պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա ունենալու մասին.*

*աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմնին.*

*Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին.*

3.2.1.9 Վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար:

## 1. ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ (ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ




*Դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու մասին անհապաղ տեղեկացնում է՝*

*պարտապանի պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սահմանափակումների կիրառումն ապահովելու և այդ մասին տեղեկատվությունը դատարանին տրամադրելու համար.*

*գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնին, ինչպես նաև կենտրոնական դեպոզիտարիա՝ արժեթղթերի նկատմամբ անհապաղ սահմանափակում կիրառելու և պարտապանի գույքի, իրավունքների և պարտապանին սնանկ ճանաչելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում պարտապանի գույքի և իրավունքների օտարման գործարքների մասին առկա տեղեկատվությունը դատարանին տրամադրելու համար.*

*հարկային և մաքսային մարմիններին.*

*Կենտրոնական բանկին՝ առևտրային բանկերին և այլ վարկային կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին ծանուցելու նպատակով.*

*հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի պահանջները կատարելու և համապատասխան որոշումները անհապաղ դատարանին ուղարկելու համար.*

*պարտապանին լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք տված պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա ունենալու մասին.*

*աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր պետական մարմնին.*

*Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին.*

*Դատական դեպարտամենտին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար*

Վերոնշյալ մարմինները պարտավոր են տասնհինգօրյա ժամկետում դատարան ներկայացնել պարտապանի գույքի (այդ թվում՝ իրավաբանական անձանց բաժնեհավաք, փայահավաք կամ այլ կապիտալում մասնակցության), ինչպես նաև իրավունքների (այդ թվում՝ պարտապանի գրավառուի իրավունքների) գրանցման մասին, իսկ բանկերը և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝

պարտապանի՝ բանկային հաշիվների և դրանց մնացորդների, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ ունեցած իրավունքների մասին տեղեկություններ:

Դատարանի կողմից սնանկության մասին դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու դեպքում վճիռն ուղարկվում է վերոնշյալ մարմիններին:

*Պարտապանին լուծարելու մասին որոշման մեկ օրինակը դատարանն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ համապատասխան գրառում կատարելու համար:*

**Եթե ֆիզիկական անձ պարտապանը, փաստացի իր գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատեր պարտապանը կամ իրավաբանական անձ պարտապանի** *ղեկավարը բացակայում են, և նրանց գտնվելու (բնակության) վայրը բացահայտել հնարավոր չէ, ապա դատարանն իր նախաձեռնությամբ հետախուզում է հայտարարում պարտապանի (պարտապանի ղեկավարի) և նրա գույքի, ինչպես նաև հաշվապահական և այլ փաստաթղթերի նկատմամբ:*

Հետախուզումն ապահովելու նպատակով՝ դատարանն ուղարկում է հարցումներ Ոստիկանությանը, Կենտրոնական բանկին, Կենտրոնական դեպոզիտարիային, հարկային և մաքսային մարմիններին:

**Կառավարչի և պետական մարմինների և այլ կազմակերպությունների միջև հաղորդակցումը**

Կառավարչի և պետական մարմինների / այլ կազմակերպությունների միջև հաղորդակցությունը հիմնականում իրականացվում է հետևյալ ուղղություններով:

- Կառավարչի կողմից դատարան ներկայավող դիմումներ, միջնորդություններ, հաշվետվություններ
- Ժողովի և այլ գործողությունների մասին ծանուցումներ պարտատերերին և պարտապանին
- Կառավարչի կողմից իրականցվելիք հարցումներ՝ անշարժ գույքի պետական ռեգիստր, իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին, հարկային և մաքսային մարմիններ, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն և Սոցիալական ապահովության ծառայություն[5]:
- Լուծարման արդյունքում կազմակերպության գործունեության դադարման գրանցում

**Տվյալների բեռնում այլ շտեմարաններից**

*1. Ընդհանուր դրույթներ*

Տվյալների փոխանակումը իրականացվում է HTTPS պրոտոկոլով առանձնացված պաշտպանված ցանցի միջոցով, օգտագործելով ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի կողմից տրամադրված թվային սերտիֆիկատները: Հարցումները կատարվում են JSON ձևաչափով Unicode UTF-8 ֆորմատով:

*ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ (ԻԱՊՌ)*

Հարցումները կատարվում են ԻԱՊՌ գրանցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ դաշտերով՝

[5] Նշված հաղորդակցումն իրականացվելու է Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

| Իրավաբանական անձ և Անհատ Ձեռնարկատեր | Ֆիզիկական անձ |
|---|---|
| Գրանցման համար | Անձնագրի սերիան և համարը |
| ՀՎՀՀ | Հանրային ծառայությունների համարանիշ |
| ՁԿԴ | |
| Կազմակերպության (ԱՁ) անվանում | |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 1-ում[6]:**

### *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ (ՔԿԱԳ)*

Հարցումները հնարավոր է կատարել ՔԿԱԳ պետական ռեգիստրում գրանցված տվյալների մասով՝ անձի երեխաներ, ծնողներ, քույրեր, եղբայրներ և այլ օրենքով նախատեսված փոխկապակցված անձինք:

| Անձի տվյալներ |
|---|
| Անձնագրի սերիան և համարը |
| Անուն ազգանուն հայրանուն |
| Հանրային ծառայությունների համարանիշ |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 2-ում**

### *ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

Հարցումները կատարվում են Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության էլեկտրոնային շտեմարանում գրանցված տվյալների մասով՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող ավտոտրանսպորտային միջոցներ (ԱՏՄ)

| Իրավաբանական անձ | Ֆիզիկական անձ |
|---|---|
| Գրանցման համար | Անձնագրի սերիան և համարը |
| ՀՎՀՀ | Հանրային ծառայությունների համարանիշ |
| Պետ. համարանիշ | Պետ. համարանիշ |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 3-ում**

### *ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ*

Հարցումները կատարվում են Ոստիկանության ԱՎՎ ծառայության էլեկտրոնային շտեմարանում գրանցված տվյալների մասով՝ ֆիզիկական անձի մասին

---

[6] Այս և մյուս մարմիններից ստացվող պատասխանների վերաբերյալ տվյալները, որոնք ներկայացված են հավելվածներում, կարող են հետագայում ճշգրտվել Պատվիրատուի և համապատասխան մարմինների կողմից և արտացոլվել հարցումների իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման մեջ:

| **Ֆիզիկական անձ** |
|---|
| Անձնագրի սերիան և համարը |
| Հանրային ծառայությունների համարանիշ |
| Անուն Ազգանուն Հայրանուն Ծննդյան ամսաթիվ |
| Հաշվառման հասցե-Մարզ |
| Հաշվառման հասցե-Համայնք |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 4-ում**

***ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ***

Հարցումները կատարվում են Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի էլեկտրոնային շտեմարանում գրանցված տվյալների մասով՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին

| **Իրավաբանական անձ** | **Ֆիզիկական անձ** |
|---|---|
| Գրանցման համար | Անձնագրի սերիան և համարը |
| ՀՎՀՀ | Հանրային ծառայությունների համարանիշ |
| Գույքային իրավունքի ծագման ամսաթիվ | Գույքային իրավունքի ծագման ամսաթիվ |
| Գույքային իրավունքի վերաբերյալ այլ տեղեկատվություն | Գույքային իրավունքի վերաբերյալ այլ տեղեկատվություն |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 5-ում**

***ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ***

Հարցումները կատարվում են Պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային շտեմարանում գրանցված տվյալների մասով՝ ֆիզիկական անձանց մասին

| **Ֆիզիկական անձ** |
|---|
| Անձնագրի սերիան և համարը |
| Հանրային ծառայությունների համարանիշ |
| ՀՎՀՀ՝ ԱՁ-ի դեպքում |
| **Իրավաբանական անձ** |
| ՀՎՀՀ |
| Գրանցման համար |

**Հարցման պատասխան դաշտերի ամբողջական ցանկը և նկարագրությունը ներկայացված են Հավելված 6-ում:**

# ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## Ընդհանուր դրույթներ

Էլեկտրոնային Սնանկության հարթակը պետք է ապահովի օրենսդրությամբ նախատեսված սնանկության գործառույթների իրականացման ընթացքում բոլոր տեսակի տվյալների հավաքագրման, ծանուցումների իրականացման և պետական մարմինների հետ փաստաթղթերի փոխանակման գործողությունների կատարումը էլեկտրոնային եղանակով: Հարթակում առկա տեղեկատվությունը պետք է դասակարգված լինի ըստ հասանելիության աստիճանների և համապատասխան մասով հասանելի լինի առցանց բոլոր օգտվողներին, օրենսդրությամբ նախատեսված դրույթներին համապատասխան:

*Հարթակի հիմնական ֆունկցիոնալ բաղադրիչներն են՝*

- *Օգտվողների կառավարման բաղադրիչ (կրճատ ՕԿԲ)*
- *Գործերի կառավարման բաղադրիչ (կրճատ ԳԿԲ)*
- *Տվյալների փոխգործելիության բաղադրիչ (կրճատ ՏՓԲ)*
- **Ծանուցումների իրականացման բաղադրիչ (կրճատ ԾԻԲ)**
- *Աճուրդների իրականացման բաղադրիչ (կրճատ ԱԻԲ)*
- *Սնանկության կառավարիչների շտեմարանի (գրանցամատյանի) և վիճակահանության բաղադրիչ (կրճատ ՍԿՇԲ)*
- *Որոնման, հաշվետվությունների և վիճակագրական բաղադրիչ (կրճատ ՈՀԲ)*
- *Օգտվողի անձնական փիրույթ բաղադրիչ (կրճատ ՕԱՏԲ)*
- *Կայքի բովանդակության կառավարման բաղադրիչ (կրճատ ԿԲԿԲ)*

Բաղադրիչների փոխգործելիության նկարագրություն՝

**1) Հարթակի օգտվողների միջերեսի և գործերի կառավարման բաղադրիչի փոխգործելիություն** ապահովում է հարթակում առկա տեղեկատվության ներկայացումը այցելուներին և իրենց փոխազդեցությունը հարթակի հետ: Բաղադրիչում պետք է սահմանված լինեն այցելուների երկու տեսակ՝ առցանց օգտվող և գրանցված օգտվող:

**2) ՕԱՏԲ և ԳԿԲ փոխգործելիություն** ապահովում գրանցված օգտվողների փոխազդեցությունը գործերի կառավարման, աճուրդների անցկացման և սնանկության կառավարիչների շտեմարանի բաղադրիչների հետ: Բաղադրիչի միջերեսը ներկայացված է 4.1.2 կետում:

**3) ՕԿԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է օգտվողների գրանցման, նույնականացման և հասանելիության աստիճանի սահմանման գործընթացները:

**4) ՍԿԲՇԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է կառավարիչների տվյալների բեռնման և գործերի կարգավիճակների փոխանակման գործընթացները:

**5) ԱԻԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է սնանկության վարույթների արդյունքում առաջացած գույքային տեղեկատվության փոխանակումը, սակարկությունների արդյունքների ներկայացումը և ամրագրումը:

**6) ՀԿԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է հարթակի ամբողջական տեխնիկական սպասարկման գործընթացները՝ անվտանգության և գործողությունների իրականացման գրանցմատյանների վարումը, կապի կարգավիճակի և շտեմարանների հասանելիության ապահովումը:

**7) ԿԲԿ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է ԳԿԲ-ում առկա գործերի ներկայացումը հարթակի հանրային մասում, դիմումների ընդունումը կայքից և բովանդակության ներկայացումը:

**8) ԾԻԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է անհրաժեշտ ծանուցումների իրականացումը և ծանուցման արդյունքների ներկայացումը ԳԿԲ-ում:

**9) ՏՓԲ և ԳԿԲ փոխգործելիությունը** ապահովում է այլ էլեկտրոնային շտեմարաններից տվյալների բեռնումը, դասակարգումը և ներկայացումը ԳԿԲ-ին:

Հարթակի բաղադրիչների միջև փոխգործելիության ուղղությունները ենթակա են վերջնական քննարկման և համաձայնեցման Պատվիրատուի հետ:

*Օգտվողների գրանցման և կառավարման բաղադրիչի նկարագրություն*

Տվյալ բաղադրիչը ապահովում է օգտվողների գրանցման, նույնականացման, հասանելիության աստիճանի սահմանման և համապատասխան գործողությունների իրականացման թույլատվության գործառույթների իրականացումը:

Համաձայն առաջարկվող մեթոդոլոգիայի անհրաժեշտ է սահմանել օգտվողների հետևյալ տեսակները՝

- դատարան,
- սնանկության գործերով կառավարիչ,
- պարտապան,
- պարտատեր,
- ապահովված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման մասին դիմող,
- երաշխավոր,
- երաշխիք տված անձ,
- երրորդ անձ գրավատու,
- աճուրդին մասնակցել ցանկացողներ և աճուրդի մասնակիցներ,
- Արդարադատության նախարարություն,
- ԻԿԿ,
- պետական մարմնի, ՀՀ ԿԲ կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցիչ

որոնց հիմնական իրավասություններն են համակարգում՝

- Վարույթի դիմումների, միջնորդությունների (փաստաթղթերի) ստեղծում
- Վարույթի նյութերի վերբեռնում և ներբեռնում
- Տվյալների հարցում/բեռնում այլ էլեկտրոնային համակարգերից
- Աճուրդի նյութերի ստեղծում/փոփոխում
- Աճուրդի նյութերի դիտում
- Սնանկության կառավարիչների շտեմարանի (գրանցամատյանի) վարում
- Համակարգի ընդհանուր կառավարում
- Օգտվողների գրանցում
- Հաշվետվությունների և գրանցամատյանի դիտում

Օգտվողները համակարգ կարող են մուտք գործել երկու եղանակով՝

- խիստ նույնականացում - տվյալ պարագայում օգտվողն իր **նույնականացման քարտը** տեղադրում է նույնականացման քարտը կարդացող սարքի մեջ, ինչից հետո հնարավորություն է ստանում իր իրավասությանը համապատասխան մուտք գործել համակարգ:
- պարզ նույնականացում - այս եղանակով նույնականացման պարագայում օգտվողը կարող է գրանցվել կամ ստանալ **մուտքանուն և գաղտնաբառը** (կիրառման դեպքերը ենթակա են քննարկման Պատվիրատուի հետ), որոնք մուտքագրելուց հետո իր իրավասությանը համապատասխան մուտք է գործում համակարգ:

Յուրաքանչյուր անձ, Համակարգում ավտորիզացվելու դեպքում, պետք է տեսնի այն գործերի / պրոցեսների ցուցակը, որոնցով ինքը ներգրավված է, ինչպես նաև՝ այն կարգավիճակը, որն ինքն ունի այս կամ այն գործով / պրոցեսով:

Ավտորիզացիայի արդյունքում / միջոցով պետք է ճանաչվի նաև անձի՝ այս կամ այն իրավաբանական անձի կամ պետական (կամ տեղական ինքնակառավարման) մարմնի ներկա-յացուցչի կարգավիճակը:

Ավտորիզացման / իդենտիֆիկացման հնարավորություն պետք է ունենան նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

Յուրաքանչյուր գործի շրջանակներում անձի կարգավիճակը կարող է որոշվել կամ վերացվել (անձը կարող է կարգավիճակ ստանալ կամ կորցնել) կամ ավտոմատ կերպով՝ որոշակի իրադարձության հետևանքով, կամ՝ դատավորի կողմից: Որոշ կարգավիճակներ պետք է հնարավոր չլինի վերացնել:

Որոշակի իրավունքներ և ֆունկցիաներ կոնկրետ գործով կարգավիճակ ունեցող ցանկացած անձի համար «ունիվերսալ» են, սակայն կա նաև իրավասությունների և ֆունկցիաների որոշակի շրջանակ, որը հատուկ է միայն գործով այս կամ այն կարգավիճակն ունեցող անձին: Կոնկրետ գործով կարգավիճակ չունեցող անձինք ևս պետք է կարողանան տվյալ գործի շրջանակներում որոշակի գործողություններ կատարել:

Հնարավոր կարգավիճակների ցանկը, յուրաքանչյուր կարգավիճակի համար հասանելի ֆունկցիոնալությունը, յուրաքանչյուր կարգավիճակ կրող անձի իրավունքների շրջանակը և ավտորիզացիայի հետ կապված այլ մանրամասները պետք է որոշվեն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և այլ կիրառելի իրավական ակտերի գործող խմբագրության համաձայն:

Հարթակի նախագծման և ներդրման ընթացքում անհրաժեշտ է քննարկել և հստակեցնել իրավասությունների և օգտվողի տեսակները ցուցակում, հիմնական ֆունկցիոնալ մատրիցան հետևյալն է.

| | Վարույթի փաստաթղթերի ստեղծում | Վարույթի նյութերի վերբեռնում և ներբեռնում | Տվյալների հարցում/բեռնում այլ էլեկտրոնային համակարգեր | Աճուրդի նյութերի ստեղծում/թարմացում/փոփոխում | Աճուրդի նյութերի դիտում | Սնանկության կառավարիչների շտեմարանի (գրանցամատյանի) վարում | Համակարգի ընդհանուր կառավարում | Օգտվողների գրանցում | Հաշվետվությունների և գրանցամատյանի դիտում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| դատարան | | V | V | V | V | | V | V | V |
| սնանկության գործերով կառավարիչ | V | V | | | V | | | | V |
| պարտապան | V | V | | | V | | | | V |
| պարտատեր | V | V | V | | V | | | | V |
| ապահոված իրավունքի առարկայի արտադատական կարգով իրացման մասին դիմող | V | V | V | | V | | | | V |
| երաշխավոր, երաշխիք տված անձ | | | V | | V | | | | V |
| երրորդ անձ գրավատու | | V | V | | V | | | | V |
| աճուրդի մասնակից | | V | V | | V | | V | | V |
| Արդարադատության նախարարություն, ԻԿԿ | | | | V | V | V | V | | V |
| Պետական մարմնի, ՀՀ ԿԲ կամ Դեպոզիտարիա ներկայացուցիչ | | | V | | V | | | | V |
| Համակարգի ղեկավար | | | | | | | V | V | |

Համակարգի նախագծման և մշակման փուլում վերը նշված աղյուսակը պետք է մանրամասն քննարկվի և հստակեցվի Պատվիրատուի հետ:

Աղյուսակը նախնական է, և քննարկումների / հստակեցումների արդյունքում կարող է էապես փոփոխվել:

Օգտվողի գրանցման համար անհրաժեշտ է գրանցել համակարգում հետևյալ պարտադիր դաշտերը՝

| Դաշտի անվանում | Պարտադիր | Նկարագրություն |
|---|---|---|
| Օգտվողի անուն | Այո | լատինատառ նիշերի խումբ, որը որոշվում է օգտվողի կողմից |
| Գաղտնաբառ | Այո | լատինատառ նիշերի խումբ, անվտանգության պահանջներում նշված պայմաններին համապատասխան |
| Անուն | Այո | Օգտվողի անունը ըստ անձնագրային տվյալների |
| Ազգանուն | Այո | Օգտվողի ազգանունը ըստ անձնագրային տվյալների |
| Հայրանուն | Ոչ | Օգտվողի հայրանունը ըստ անձնագրային տվյալների |
| Սեռ | Այո | Օգտվողի սեռը ըստ անձնագրային տվյալների |
| Ծննդյան ամսաթիվ | Այո | Օգտվողի ծննդյան ամսաթիվը ըստ անձնագրային տվյալների |
| ՀԾՀ | Այո | Օգտվողի հանրային ծառայությունների համարանիշը |
| Անձնագրի համար | Ենթակա է քննարկման | Օգտվողի ցանկացած գործող անձը հաստատող փաստաթղթի (ԱՀՓ) համարը |
| Ում կողմից է տրված | Ոչ | Ում կողմից է տրված ԱՀՓ |
| Տրման ամսաթիվ | Ոչ | ԱՀՓ-ում նշված տրման ամսաթիվը |
| Վավերականության ժամկետ | Ոչ | ԱՀՓ-ում նշված վավերականության ժամկետը |
| Հաշվառման հասցե | Այո | Օգտվողի հաշվառման հասցեն |
| Երկիր | Այո | |
| Մարզ | Ենթակա է քննարկման | |
| Համայնք | Այո | |
| Բնակավայր | Ենթակա է քննարկման | |
| Փողոց | Ենթակա է քննարկման | |
| Տուն | Ենթակա է քննարկման | |
| Բնակարան | Ենթակա է քննարկման | |
| Ծանուցման հասցե | Ոչ | Օգտվողի կողմից հայտարարված հասցե, որով նա պատրաստ է ստանալ ծանուցումներ՝ չհայտարարելու դեպքում համընկնում է հաշվառման հասցեի հետ |
| Երկիր, մարզ, համայնք, բնակավայր, փողոց, տուն, բնակարան | Ոչ | |
| Բջջային հեռախոսահամար | Ոչ | Հայտարարված հեռախոսահամար, որով օգտվողը պատրաստ է ստանալ ծանուցումներ |
| էլ-փոստ | Այո | Հայտարարված էլ. փոստի հասցե, որով օգտվողը պատրաստ է ստանալ ծանուցումներ |

Համակարգի նախագծման և մշակման փուլում վերը նշված աղյուսակը պետք է մանրամասն քննարկվի և հստակեցվի Պատվիրատուի հետ: Աղյուսակը նախնական է, և քննարկումների / հստակեցումների արդյունքում կարող է էապես փոփոխվել:

*Գործերի կառավարման բաղադրիչ*

Տվյալ բաղադրիչը ապահովում է սնանկության դիմումների, վարույթների, որոշումների **(այսուհետ գործեր)** ստեղծման, ներկայացման, մշակման, հաստատման, բողոքարկման, վերարտադրման և խմբագրման էլեկտրոնային գործառույթների իրականացումը (**այսուհետ կառավարում**) հարթակում:

Գործերի կառավարումը իրականացվում է համակարգում գրանցված օգտվողների կողմից տվյալ գործընթացում թույլատրված գործողությունների միջոցով:

Գործառույթները հարթակում բաղկացած են հետևյալ գործընթացներից՝

- **Սնանկության և սնանկության վտանգի վերաբերյալ դիմումի ներկայացում**
- **Սնանկության և սնանկության վտանգի վերաբերյալ դիմումի ընթացք դատարանում**
- **Սնանկ ճանաչելու հարցի լուծում/ և սնանկության վտանգի հարցի լուծում**
- **Գործերի բողոքարկում**
- **Առանձին պահանջների կասեցում**
- **Կառավարչի ընտրություն եվ նշանակում**
- **Պարտատերերի ժողովի կազմակերպում**
- **Ապահոված իրավունքի առարկայի իրացում**
- **Մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրում**
- **Պահանջների ներկայացում**
- **Պարտապանի գույքի հայտարարագրում, գույքագրում, ֆինանսական վիճակի վերլուծություն**
- **Ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացում, քննարկում եվ հաստատում**
- **Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացում և ավարտ**
- **Լուծարման վարույթի սկիզբ**
- **Գույքի վաճառք հրապարակային սակարկություններով**
- **Գույքի վաճառք ուղղակի գործարքով**
- **Գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխում**
- **Օրենքով նախատեսված այլ միջնորդությունների ներկայացում և դրանց ընթացքի լուծում**
- **Սնանկության վերաբերյալ գործի ավարտ**

Գործերի կառավարման գործընթացների փոխկապակցվածությունը և տրամաբանությունը ներկայացված են ստորև բերված գծապատկերում՝


ԳՈՐԾԻ ՍԿԻԶԲ
1 ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ
2. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԹԱՑՔ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
4 ԳՈՐԾԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ
6 ԿԱՌԱՎԱՐՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ
3 ՍՆԱՆԿ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ
5 ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ
8 ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
12 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
7 ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
10 ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՈՒՄԸ
9 ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
11 ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
13 ԼՈՒԾԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՍԿԻԶԲ
14 ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԸ ՈՒՂՂԱԿԻ ԳՈՐԾԱՐՔՈՎ
15 ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
16 ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ
ԳՈՐԾԻ ԱՎԱՐՏ

Գործերը համակարգում պետք է գրանցվեն էլեկտրոնային ձևերի միջոցով, որոնք ներկայացված են լրացման ենթակա դաշտերի խմբով:

Գործողությունների իրականացումը բաղադրիչում ենթադրում է գործի կարգավիճակի փոփոխություն կամ թարմացում, որի ընթացքում հնարավոր է նաև գործում գրառված տեղեկատվության կամ կից նյութերի փոփոխություն:

**Դատավարական փաստաթղթերի ներկայացման գործընթացը**[7] պետք է նախատեսի հնարավորություն՝ ներքոնշյալ դաշտերի լրացման միջոցով էլեկտրոնային տվյալների հիման վրա գեներացված էլեկտրոնային փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը մուտքագրել սնանկության գործերով էլեկտրոնային համակարգ: Պետք է ապահովվի փոխգործելիությունը՝ սնանկության գործերով էլեկտրոնային համակարգի և ներկայումս առկա (այդ թվում՝ նախատեսվող / ապագայում ստեղծվելիք) համապատասխան էլեկտրոնային համակարգերի միջև: Եթե այդպիսի փոխգործելիության ապահովման նպատակով անհրաժեշտ լինի կատարել որևէ համակարգի արդիականացում, ապա պետք է ապահովվի նաև նման համակարգ(եր)ի արդիականացումը:

**Սնանկության (սնանկության վտանգի) դիմում**

| **ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ** |
|---|
| Դատարանի անվանումը |
| անունը (անվանումը), |
| հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, |
| ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), |
| պարտատեր ֆիզ. անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, |
| պարտատեր իրավաբանական անձի պետական գրանցման համարը, |
| ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե դիմումը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը, |

| **ՊԱՐՏԱՊԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ** |
|---|
| անունը (անվանումը), |
| հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն, |
| Կամավոր սնանկության դիմումի դեպքում նաև՝ |
| պարտապան ֆիզ. անձի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, |

[7] Սույն բաժնում նշված փաստաթղթերի էլեկտրոնային դաշտերի ձևերն ու բովանդակությունը ենթակա են վերջնական քննարկման և համաձայնեցման Պատվիրատուի հետ:

| |
|---|
| պարտապան իրավաբանական անձի պետական գրանցման համարը, |
| ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը, |

| |
|---|
| **ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ** |
| պարտատիրոջ դրամական պահանջի չափը, պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը |
| պարտավորության կամ դրա մասի (մասերի) կատարման ժամկետը. |
| **ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ** |
| պարտատիրոջ դրամական պահանջի չափի հաշվարկները |
| դիմումի փաստական հիմքերը, այդ թվում՝ պարտավորության ծագման հիմքը (պարտադիր) |
| դիմումի իրավական հիմքերը (իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է պահանջը (ոչ պարտադիր) |
| **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ** |
| պահանջ՝ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ |
| առաջարկ՝ ժամանակավոր կառավարչի թեկնածության կամ համաձայնություն՝ ընտրությունը դատարանին թողնելու վերաբերյալ |
| դիմողի միջնորդությունները: |

**ԿՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ**

ա) իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 30 օրից ոչ ավելի վաղեմություն ունեցող պետական գրանցման տվյալները.

բ) հարկային մարմինների կողմից դիմումը ներկայացվելու դեպքում՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող պարտապանի ներկայացրած վերջին հարկային հաշվարկները.

<u>Ի լրումն դիմումին կցվող նյութերի կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի դիմումին կցվում են նաև</u>

ա) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկը՝ համաձայն վերջին գույքագրման արդյունքների (դրա առկայության դեպքում), ներառյալ՝ կապիտալ և ֆինանսական ներդրումները, հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները և նշված կազմին չպատկանող այլ միջոցները.

բ) պարտապանի պարտատերերի և պարտապանների (այդ թվում՝ այն քաղաքացիների, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար) ցուցակը, նրանց անունները (անվանումները), բնակության (գտնվելու) վայրը և առանձին պարտավորությունների, ներառյալ՝ արտահաշվեկշռային պարտավորությունների բնույթը և չափը: Նշված տեղեկությունները պետք է ներառեն նաև այն պարտավորությունները, որոնց ժամկետը չի լրացել, ինչպես նաև պարտապանի տված երաշխիքները և ստանձնած այլ պարտավորությունները.

գ) պարտապանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները.

դ) եթե պարտապանը տնտեսական ընկերակցություն է, ապա մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները), բնակության (գտնվելու)

վայրը և պետական գրանցման տվյալները.

ե) պարտապանի հայտարարությունը՝ ֆինանսական առողջացման մտադրության մասին.

զ) տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների մասին.

է) կամավոր սնանկության կամ սնանկության վտանգի մասին դատարան ներկայացվող դիմումի և կից փաստաթղթերի պատճենները բոլոր պարտատերերին ուղարկելու մասին ապացույցները, սնանկության գործով կառավարչի վերաբերյալ առաջարկը.

ը) սնանկության վտանգի դիմումի դեպքում՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական առողջացման ծրագիրը

թ) դիմումում ժամանակավոր կառավարչի թեկնածության առաջարկ ներկայացնելու դեպքում՝ այդ թեկնածուի գրավոր համաձայնությունը՝ որպես ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ:

## ՊԱՀԱՆՋ

| |
|---|
| **ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ**<br>**ՊԱՐՏԱՏԵՐ** |
| - իրավաբանական անձի համար՝ անվանումը և գտնվելու վայրը, |
| - ֆիզիկական անձի համար՝ անունը և բնակության վայրը. |
| **ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ** |
| պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև կատարման ժամկետը. |
| պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը |
| պահանջը հիմնավորող հանգամանքները |
| **ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ** |
| պահանջի չափի համապատասխան հաշվարկները |
| **ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ** |
| Խնդրանք՝ պահանջը գրանցելու մասին |

### ԿՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

Պահանջի հիմնավորվածությունը հաստատող տարատեսակ ապացույցներ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի և քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ սնանկության վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների կողմից ներկայացվում են բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մի մասը բովանդակային առումով նույնական են քաղաքացիական դատավարության շրջանակներում կիրառվող դատավարական փաստաթղթերի հետ, իսկ մյուսների մասով առկա չեն հստակ օրենսդրական պահանջներ, ինչը ենթադրում է այդ խումբ փաստաթղթերի համար ընդհանրական ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասեր ներառող փաստաթուղթ ներկայացնելու հնարավորության նախատեսում:

Պահանջ ներկայացնելու փոխարեն պարտատերը նաև պետք է հնարավորություն ունենա դատարանին միջնորդել իր նախկինում ներկայացված դիմումը դիտարկել որպես պահանջ:

*Ծանուցումների իրականացման բաղադրիչ (կրճատ ԾԻԲ)*

Տվյալ բաղադրիչը պետք է իրականացնի օրենսդրությամբ նախատեսված և հարթակի գործառույթների իրականացման ընթացքով նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց ծանուցման գործընթացը:

Ծանուցման գործընթացը իրականացվում է էլեկտրոնային կամ թղթային տարբերակով և համարվում է իրականացված եթե առկա է ստացման հավաստման էլեկտրոնային տարբերակը (թղթային ծանուցման դեպքում հավաստման թվայնացված տարբերակը), ստացման ամսաթվի և ստացման մանրամասների նշումով:

Ծանուցման բաղադրիչի գործընթացի տրամաբանությունը ներկայացված է ստորև գծապատկերում




Անհրաժեշտ է ներդնել հետևյալ տեսակի ծանուցումների իրականացման տարբերակները՝

- Համակարգի միջոցով
- Azdarar.am պաշտոնական կայքի միջոցով
- E-citizen.am պաշտոնական կայքի միջոցով
- SMS հաղորդագրությունների միջոցով
- Էլեկտրոնային փոստի միջոցով

- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով,
- Թղթային տարբերակով (փոստի միջոցով կամ առձեռն)
- հիբրիդ փոստի միջոցով,
- անհատական և հրապարակային ծանուցման այլ համակարգերի միջոցով,
- Ծանուցման այլ մեխանիզմների միջոցով:

Ծանուցման մեխանիզմների կիրառումը և ծանուցումների համակարգի ներդրումը ենթակա է քննարկման և համաձայնեցման Պատվիրատուի հետ:

*Տվյալների փոխգործելիության բաղադրիչ (ՏՓԲ)*

Տվյալ բաղադրիչը պետք է իրականացնի սնանկության գործերի շրջանակներում անհրաժեշտ էլեկտրոնային տվյալների փոխանակման գործառույթները, այդ թվում նաև՝ համաձայն սույն փաստաթաթղթում ներկայացված 3.4 «Տվյալների բեռնում այլ շտեմարաններից» բաժնի նկարագրության:

Տվյալների փոխանակման գործառույթը իրականացվում է հետևյալ գործընթացների միջոցով՝

- **Տվյալների բեռնում այլ շտեմարաններից հարցումների միջոցով**

Սույն գործընթացի շրջանակներում իրականացվող հարցումների դաշտերի նախնական նկարագրությունը ներկայացված է սույն փաստաթղթի 3.4 կետում:

- **Տվյալների տրամադրում այլ էլեկտրոնային համակարգերին**

Հարթակում շրջանառվող գործերի մասին տեղեկությունները պետք է հասանելի լինեն այլ համակարգերին API-ի միջոցով, ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջներին և** տեխնիկական առաջադրանքի 6-րդ կետում նշված անվտանգության պահանջներին, ՀՀ կառավարության 2019 թվականի N1849-Ն որոշման պահանջներին, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3.1-ին մասի և 29-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա ընդունված Կառավարության որոշումներին համապատասխան:

- **Բեռնված տվյալների համակարգում և փոխակերպում**
- **Տվյալների փոխանակման գործընթացի գրանցամատյանի վարում**

*էլեկտրոնային աճուրդների բաղադրիչ (ԷԱԲ)*

Տվյալ բաղադրիչը պետք է ապահովի «Սնանկության մասին», ՀՀ «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքների, Արդարադատության նախարարի 27.11.2020թ. N 491-Ն հրամանի և ոլորտը կարգավորող այլ օրենսդրական ակտերի դրույթներին համապատասխան առցանց էլեկտրոնային աճուրդների գործառույթների իրականացումը: ԷԱԲ հիմնական գործառույթներն են՝

- Լոտերի ստեղծում և պարունակության կառավարում
- Լոտերի մասին տեղեկությունների ներկայացում
- էլեկտրոնային վճարումների ընդունում, վճարումների բաշխում
- Լոտերի ընդլայնված որոնում
- Արդարադատության նախարարի 27.11.2020թ. N 491-Ն հրամանով սահմանված այլ գործառույթներ

**Լոտերի ստեղծում և պարունակության կառավարում**

ԷԱԲ հիմնական տարրն է կազմում ***լոտը***՝ աճուրդով վաճառվող գույք կամ իրավունք, որն ունի համապատասխան նկարագրություն: Լոտի ստեղծման համար անհրաժեշտ է ստեղծել գործիքակազմ, որը թույլ կտա իրականացնել հետևյալ գործընթացները՝

- Լոտերի դասակարգիչների կառավարում
- Լոտերի նկարագրական դաշտերի ստեղծում և խմբագրում
- Լոտերի մասին տեղեկատվության մուտքագրում կամ բեռնում այլ շտեմարաններից համապատասխան նկարագրական դաշտերում (ներկայացված է ստորև)
- Լոտերի կարգավիճակների կառավարում

**Լոտերի դասակարգիչների կառավարման** գործընթացում նախատեսվում է ստեղծել և կառավարել (համալրել, խմբագրել, կասեցնել) լոտերի նկարագրման դասակարգիչներ՝ ըստ գույքի տեսակների, կարգավիճակների, հասցեների (երկիր, մարզ, բնակավայր, փողոց) և այլ անհրաժեշտ գրադարանների, որոնց ամբողջական ցանկը և կառուցվածքը կսահմանվի ներդրման փուլում: Դասակարգիչները պետք է կապված լինեն մուտքագրման դաշտերի հետ և ապահովեն տվյալների մուտքագրումը նախապես նշված տվյալների ցանկից:

**Լոտերի նկարագրական դաշտերի կառավարման** գործընթացում նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային ձևեր գույքի հիմնական տեսակների համար՝ անշարժ գույք, շարժական գույք, սարքավորումներ և այլն (համաձայն գույքի տեսակների դասակարգչի): էլեկտրոնային ձևը հանդիսանում է դաշտերի խումբ, որը **ստեղծվում և խմբագրվում** է հարթակի համակարգի ղեկավարի կողմից: **Լրացվում է** սնանկության կառավարչի կամ այլ համապատասխան լիազորություն ունեցող համակարգի գրանցված օգտվողի կողմից:

էլեկտրոնային ձևը պարունակում է նկարագրական դաշտեր, որոնք բաժանված են երեք խմբերի՝

- **համակարգային** – դաշտեր որոնց առկայությունը և լրացումը պարտադիր է էլեկտրոնային ձևում.

- **պարտադիր** – դաշտեր, որոնք կարող են առկա լինել և որոնց լրացումը պարտադիր է էլեկտրոնային ձևում.
- **ցանկալի** – դաշտեր, որոնց լրացումը ցանկալի է էլեկտրոնային ձևում:

*Ներդրման փուլում թույլատրելի է խմբերի տեսակների ավելացում:*

Դաշտերը էլեկտրոնային ձևում հնարավոր է լինեն հետևյալ տեսակների՝

- Թվային – հնարավոր է մուտքագրել միայն թվային արժեքներ
- Նիշ - հնարավոր է մուտքագրել թիվ չհանդիսացող ցանկացած նիշ
- Տեքստ - հնարավոր է մուտքագրել ձևավորած տեքստ
- Կից նյութ – հնարավոր է կցել ֆայլեր
- Տրամաբանական արժեք – հնարավոր է ընտրել միայն Այո/Ոչ արժեք
- Նախապես որոշված արժեքներ – հնարավոր ընտրել միայն նախապես որոշված գրադարանից կամ դասակարգչից
- Ամսաթիվ եւ ժամ – հնարավոր է ընտրել միայն ամսաթվային արժեք օրացույցից
- Էլեկտրոնային հասցե – հնարավոր է մուտքագրել միայն էլ. փոստի հասցե
- Հեռախոսահամար – հնարավոր է մուտքագրել միայն հեռախոսահամար
- URL հասցե - հնարավոր է մուտքագրել միայն կայքի հասցե
- Քարտեզային հասցե – հնարավոր է ընտրել միայն աշխարհագրական տվյալներ (աշխարհագրական երկայնություն և լայնություն), որը ցուցադրելիս կարտաբերի նշված տվյալներով արբանյակային կամ տարածքային թվային քարտեզի կետ:

Լոտի նկարագրական դաշտերի ցանկը ներկայացված է ստորև, համակարգի ներդրման և շահագործման փուլում դաշտերը հնարավոր է փոփոխվեն՝ Արդարադատության նախարարի 27.11.2020թ. N 491-Ն հրամանին համապատասխան:

| Դաշտի անվանում | դաշտի խումբ | դաշտի տեսակ | Նկարագրություն |
|---|---|---|---|
| Սնանկության գործի համարը | համակարգային | Տեքստ՝ ըստ որոշակի ֆորմատի | |
| Լոտի անվանումը | համակարգային | Տեքստ | |
| Լոտի **համարը** | համակարգային | Տեքստ | Գեներացվում է ավտոմատ |
| Մեկնարկային գինը | համակարգային | Թվային | |
| Նախավճարի և մասնակցության վճարի չափը | համակարգային | Թվային | |
| Աճուրդի քայլը | համակարգային | Թվային | |
| Վաճառքի գինը (առաջարկված | համակարգային | Թվային | Արտացոլվում է աճուրդի ավարտից |

| | | | |
|---|---|---|---|
| ամենաբարձր գինը) | | | հետո |
| Աճուրդին մասնակցած և գնային առաջարկ ներկայացրած անձինք | համակարգային | Թվային և տեքստ | Աճուրդի ընթացքում երևում է միայն անձին տրված թվային ունիկալ կոդը, իսկ աճուրդի ավարտից հետո՝ հանրամատչելի անձնական տվյալները |
| Աճուրդում հաղթած անձը | համակարգային | Տեքստ | |
| Աճուրդի մեկնարկը | համակարգային | Ամսաթիվ եւ ժամ | տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը |
| Աճուրդի վերջնաժամկետը | համակարգային | Ամսաթիվ եւ ժամ | տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, գեներացվում է ավտոմատ |
| Լոտի նկարագրությունը | համակարգային | Տեքստ | Եթե լոտը բաղկացած է մեկից ավելի գույքերից, յուրաքանչյուրի մասով տրվում է առանձին: |
| **Գնային հայտերի քանակը** | համակարգային | Թվային | |
| **Լոտի գտնվելու վայրը** | պարտադիր | Քարտեզային հասցե | Եթե լոտը բաղկացած է մեկից ավելի գույքերից, յուրաքանչյուրի մասով տրվում է առանձին: |
| Սնանկության կառավարչի անունը, ազգանունը, որակավորման վկայականի համարը | համակարգային | Տեքստ | |
| Լոտի ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) | պարտադիր | Տեքստ | Եթե լոտը բաղկացած է մեկից ավելի գույքերից, յուրաքանչյուրի մասով տրվում է առանձին: |
| Լոտի նկատմամբ սահմանափակումները | պարտադիր | Տեքստ | Եթե լոտը բաղկացած է մեկից ավելի գույքերից, յուրաքանչյուրի մասով տրվում է առանձին: |
| Աճուրդին մասնակցելու այլ պայմաններ | ցանկալի | Տեքստ | |

Համակարգի նախագծման և մշակման փուլում վերը նշված աղյուսակը պետք է մանրամասն քննարկվի և հստակեցվի Պատվիրատուի հետ: Աղյուսակը նախնական է, և քննարկումների / հստակեցումների արդյունքում կարող է էապես փոփոխվել:

*Սնանկության կառավարիչների շտեմարանի (գրանցամատյանի) բաղադրիչ (ՍԿՇԲ)*

Տվյալ բաղադրիչը պետք է իրականացնի սնանկության կառավարիչների մասին տեղեկությունների **գրանցման (կառավարիչների հաշվառման), ընտրման (վիճակահանության) և գնահատման** գործառույթները, համաձայն համապատասխան օրենսդրական ակտերի, այդ թվում՝ Արդարադատության նախարարի 12.03.2020թ. N 108-Ն հրամանի[8]:

**Գրանցման գործընթացը** նախատեսում է հետևյալ տվյալների հավաքագրումը՝

| Դաշտի անվանում | Նկարագրություն |
|---|---|
| ՀԾՀ | Հանրային ծառայությունների համարանիշ, որը նաև հանդիսանում է նույնականացման ցուցանիշ հարթակի ընդհանուր օգտվողների ցանկում |
| Որակավորման վկայականի համար | Արդարադատության նախարարության կողմից տրված փաստաթղթի համար |
| Գործունեության տարածք | Երևան քաղաք, Մարզ (մարզեր) կամ ՀՀ ողջ տարածք |
| Գործերի քանակ | Ներկա պահին կառավարման տակ գտնվող գործերի քանակ |
| Գործերով պահանջների հանրագումար | Ներկա պահին կառավարման տակ գտնվող գործերով պահանջների հանրագումար |
| Վարկանիշ | Հատուկ հաստատված բանաձևով հաշվարկվող կառավարչի վարկանիշ |
| Լուսանկար | |
| Լրացուցիչ տեղեկություններ | Այլ տեղեկություններ, որոնք նախատեսված են Արդարադատության նախարարի 12.03.2020թ. N 105-Ն հրամանով կամ որոնք Կառավարիչը հարկ է համարում իր մասին գրանցել |

Համակարգը պետք է ունենա Հաշվետվությունների առանձին բաժին, որտեղ կառավարիչը պետք է հնարավորություն ունենա ներկայացնել իր տարեկան հաշվետվությունները՝ մուտքագրելով անհրաժեշտ տվյալները՝ ըստ Արդարադատության նախարարի 12.03.2020թ. N 103-Ն հրամանի[9]:

Հարթակի ներդրման փուլում անհրաժեշտ է սահմանել դաշտերի լրացման պարտադիր, ցանկալի և ինքնաշխատ լրացման եղանակները:

**Պարտադիր և ցանկալի** դաշտերի տվյալները լրացվում են օգտվողների կողմից

**Ինքնաշխատ** դաշտերի տվյալները լրացվում են համակարգի այլ բաղադրիչներում հավաքագրված տվյալների հիման վրա:

Եթե կառավարիչը այլ էլեկտրոնային փոստի հասցե չի տրամադրել, ապա բոլոր կառավարիչների պաշտոնական էլ.փոստի հասցե հանդիսանում է ՀԾՀ@e-citizen.am, որը տրամադրվում է ԷԿԵՆԳ ընկերության կողմից:

---

8 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145005

9 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140291

Գրանցումը կատարվում է երկու փուլով՝ տվյալների ներկայացում և հաստատում:




Գրանցման ենթակա տվյալները ներկայացնում (մուտքագրում) է սնանկության կառավարիչը, հաստատումը կատարվում է հարթակում համապատասխան իրավասություն ունեցող օգտվողի կողմից:

• Ընտրման գործընթացը նախատեսում է վիճակահանությամբ, պատահականության սկզբունքով՝ Արդարադատության նախարարի 12.03.2020թ. N 103-Ն հրամանով սահմանված կարգով կառավարիչների ցանկից մեկ կառավարչի ընտրություն, (հաշվի առնվելով կառավարչի ծանրաբեռնվածությունը, պարտապանի գտնվելու վայրը, կառավարչի ընտրած տարածքը և այլ ալգորիթմներ, որոնք ենթակա են քննարկման և հաստատման Պատվիրատուի կողմից):

Ընտրությունը առաջարկվում է իրականացնել 4 փուլով՝

*Փուլ 1* – Շտեմարանում գրանցված կառավարիչների տիրույթից զտվում է ցանկ, համաձայն դիմումում ներկայացված տվյալների և սահմանված կարգի համադրելիության պայմանների:

*Փուլ 2* – Ցանկում ներկայացված կառավարիչներին շնորհվում են 1-ից N տիրույթից պահատահական թվանշաններ կրնկնության բացառության սկզբունքով (որտեղ N-ը ցանկում ներառված կառավարիչների քանակն է և պարտադիր մեծ է 3-ից):

*Փուլ 3* – Պատահական թվանշանների գեներատորի (PRNG) ալգորիթմի օգնությամբ համակարգը գեներացնում է M թվանշան 1 <= M <=N պայմանով:

*Փուլ 4* – Ընտրված թվանշանը հաստատվում է համակարգի կողմից: Հաստատումից հետո օգտվողին ներկայացվում է կառավարչի ամբողջական տվյալները և գեներացվում է ընտրության արդյունքները՝ արձանագրության տեսքով:

*Որոնման, հաշվետվությունների և վիճակագրական բաղադրիչ*

Տվյալ բաղադրիչը պետք է իրականացնի հարթակի ընդհանուր որոնման գործառույթները բոլոր բաղադրիչներում գտնվող տեղեկատվությամբ: Անհրաժեշտ է ներդնել երկու որոնման տեսակներ՝ պարզ և ընդլայնված:

Պարզ որոնման դեպքում անհրաժեշտ է որոնում կատարել բանալի բառի ոչ ճշգրիտ համընկնության սկզբունքով հարթակի ամբողջ տեղեկատվության զանգվածում:

Ընլայնված որոնման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել որոնման ենթակա բոլոր դաշտերը և թույլ տալ օգտվողին ընտրել որոնման պայմաններ ըստ նիշային, գումարային, ամսաթվային արժեքների և միջակայքերի, փոխկապակցելով այդ արժեքները ԵՎ , ԿԱՄ պայմաններով՝ Օր.

Վարույթի ամսաթիվ > ‘2019-04-01’ ԵՎ Վարույթի ամսաթիվ < ‘2019-05-01’

Վերադարձնում է բոլոր գրառումները որոնց

Պարտատերի մարզ = ‘ԿՈՏԱՅՔ’ կամ Պարտատերի մարզ = ‘ԼՈՌԻ’

*Օգվողի անձնական փիրույթ բաղադրիչ*

Տվյալ բաղադրիչը պետք է ապահովի գրանցված օգտվողների փոխգործումը հարթակի բոլոր այլ բաղադրիչների հետ:

Բաղադրիչի հիմնական բաժիններն են՝

- Անձնական տիրույթ
- Ծանուցումներ
- Դիմումներ/Վարույթներ
- Աճուրդներ
- Համակարգի կառավարում

**Անձնական տիրույթ** բաժնում ներկայացված են մուտք եղած օգտվողի անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, գործողությունների և անվտանգության գրանցամատյանը: Օգտվողը պետք է հնարավորություն ունենա փոփոխել տեղեկատվության որոշակի մասը:

**Ծանուցումներ** բաժնում ներկայացված են օգտվողին կատարված բոլոր ծանուցումները, ծանուցման եղանակները, բջջային հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Տվյալ բաժնի գործիքակազմը պետք է թույլ տա ընթերցել ծանուցման տեքստը և նշել այն որպես կարդացված, ստեղծել նոր հաղորդագրություն և հարթակի **ՏԻԲ** միջոցով առաքել այն համապատասխան հասցեատերին:

**Դիմումներ/Վարույթներ** բաժնում ներկայացված են բոլոր այն դիմումների և վարույթների մասին տեղեկությունները, որոնցում առկա են մուտք եղած օգտվողի տվյալները: Տեղեկատվությունը անհրաժեշտ է բեռնել հարթակի ԳԿԲ-ից կամ դատական իշխանության տեղեկատվական համակարգից:

**Աճուրդներ** բաժնում ներկայացված են բոլոր աճուրդների մասին տեղեկությունները:

**Կայքի բովանդակության կառավարման բաղադրիչ**

Տվյալ բաղադրիչը պետք է ապահովի հարթակում անհրաժեշտ հանրային տեղեկատվության ներկայացման, կառավարման և խմբագրման գործառույթները:

Բաղադրիչի հիմնական գործընթացներն են՝

- Բովանդակության կառավարում
- Տվյալների կառուցվածքի և գրադարանների կառավարում
- Արտաքին ցուցադրման հսկողություն
- Հաշվետվություններ

**Բովանդակության կառավարում**

Հարթակի բովանդակությունը պետք է բաժանված լինի մի քանի հիմնական մասի.

- Նյութեր (էջեր)
- Մեդիա (պատկերներ, տեսանյութեր և այլ տեսակի ֆայլեր)
- Տվյալների ներմուծման ձևեր
- Ներկառուցված (embedded) հղումներ (կայքերի, քարտեզային տվյալների, սոց. ցանցերի բաժինների)

Յուրաքանչյուր ստեղծված նյութ պետք է ունենա իր ունիկալ հասցեն (URL), որը կարող է օգտագործվել որպես հղում կայքի ընտրացանկում և այլ բաղադրիչներում: Նյութերը կարող են լինել մեկ կամ մի քանի այլ նյութերի հետ փոխկապակցված, որոնք կարող են խմբագրվել վիզուալ խմբագրի ձևաչափով:

Յուրաքանչյուր նյութը պետք է պարունակի հետևյալ կարգավորումները՝

- հասցե
- հեղինակ
- հասանելիության աստիճան
- առնչվող նյութեր

**Տվյալների կառուցվածքի և գրադարանների կառավարում**

Հարթակում տեղադրված նյութերը պետք է բաժանված լինեն տեսակների և հասանելիության աստիճանների, որոնք պետք է լինեն նախադրված, իսկ ձևերը սահմանված լինեն ներդրման փուլում:

Ձևը իրենից ներկայացնում է դաշտերի համախումբ, որոնք լրացվում են օգտագործողի կողմից կամ բեռնվում են այլ շտեմարանից:

**Առաջարկվող նյութերի տեսակներն են՝**

- Դատավարական փաստաթղթեր (դիմում, առարկություն, միջնորդություն, պահանջ և այլն)
- Ժողովի արձանագրություն
- Դատարանի որոշում
- Աճուրդի ցանկ
- Աճուրդի լոտ

Ներդրման և շահագործման փուլերում հնարավոր է տեսակների ավելացում, ինչը պետք է ապահովվել համապատասխան գործիքի միջոցով:

**Գրադարաններ**

Նյութերի կանոնակարգված մուտքագրման և արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է սահմանել կիրառվող գրադարանների բովանդակության կառավարման գործիք, որը կապահովի մուտքագրման, եզակիության ստուգման և խմբագրման գործառույթները:

**Առաջարկվող գրադարաններն են՝**

- ՀՀ մարզեր, համայնքներ և բնակավայրեր
- Դատավարական փաստաթղթերի տեսակներ
- Ապացույցների տեսակներ
- Փաստաթղթերի տեսակներ
- Կցվող նյութերի տեսակներ
- Աճուրդի լոտերի դասակարգիչներ

Ներդրման և շահագործման փուլերում հնարավոր է գրադարանների ավելացում, ինչը պետք է ապահովել համապատասխան գործիքի միջոցով:

*Հարթակի օգտվողների միջերեսի հիմնական բաժիններն[10] են՝*

- *Գլխավոր էջ*
- *Անձնական փիրույթ*
- *Տեղեկատու*
- *Կառավարիչներ*
- *Աճուրդներ*
- *Որոնման համակարգ*
- *Վարույթների ռեեստր*

[10] Ենթակա են հետագա հստակեցման, լրամշակման և հաստատման Պատվիրատուի կողմից

**Գլխավոր էջ** - գլխավոր էջում անհրաժեշտ է ներկայացնել հարթակի հիմնական բաժինները, հեշտ հասանելի և պարզ գունային լուծումներով:



**Անձնական տիրույթ** – բաժին, որտեղ հնարավոր է մուտք գործել միայն գրանցված օգտվողներին: Օգտվողների նույնականացումը հնարավոր է իրականացնել մի քանի տարբերակներով՝ նույնականացման քարտով, օգտվողի մուտքանունով/գաղտնաբառով, և այլ նույնականացման մեթոդներով, որոնք ապահովում են անհրաժեշտ անվտանգության աստիճան:




**Աճուրդներ** – բաժին, որտեղ ներկայացված են աճուրդներում առկա լոտերը, դասակարգիչները, ըստ որոնց ներկայացված են լոտերը և լոտերի սակարկությունների մասնակցության գործիքակազմը:


ՎԵՐՆԱԳԻՐ
Օգտվողի տիրույթ
Իմ լոտերը
Գնված լոտեր
Ցանկալի լոտեր
Հաշվեկշիռ
50,000 ՀՀ ԴՐԱՄ
ՈՐՈՆՈՒՄ ԱՃՈՒՐԴՈՎ
ԼՈՏ 1
ԼՈՏ 2
ԼՈՏ 3
Լոտերի դասակարգիչ
Անշարժ գույք
Բնակարաններ
Առանձնատներ
Հողատարածքներ
Ամառանոցներ
Շարժական գույք
Մեքենաներ
Հատուկ տեխնիկա
Բեռնատարներ
Կցորդներ
ԳԱԼԻՔ ԱՃՈՒՐԴՆԵՐ
ԼՈՏ 4
ԼՈՏ 4
ԼՈՏ 4
ՏԵՂԵԿԱՏՈՒ

**Որոնման համակարգ** - բաժին, որտեղ ներկայացված են հարթակի ընդհանուր որոնման գործառույթները՝ բոլոր բաղադրիչներում գտնվող տեղեկատվությամբ: Պետք է առկա լինեն երկու որոնման տեսակներ՝ պարզ և ընդլայնված:

Պարզ որոնում՝



**Ընդլայնված որոնում՝**



## Որոնման արդյունք

Նախկին որոնումներ
- ▷ մերսեդես
- ▷ bmw
- ▷ բնակարան

**Որոնման արդյունքներ**

→ Փորձնական Վարույթ որում փորձ է անցկացնում որոնման համար **բանալի բառ**ով ամբողջ հարակով Փորձնական տեքստ որը փորձ է անցկացնում որոնման համար **բանալի բառ**ով ամբողջ հարակով

→ 


Փորձնական լոտ Աճուրդից որը փորձ է անցկացնում որոնման համար **բանալի բառ**ով ամբողջ հարակով Փորձնական տեքստ որը փորձ է անցկացնում որոնման համար **բանալի բառ**ով ամբողջ հարակով

## . ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Սույն բաժնում ներկայացված է համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ նվազագույն տեխնիկական պահանջները սարքավորման և կիրառվող ծրագրային ապահովման նկատմամբ:Ընդհանուր առմամբ, Համակարգը մշակելիս պետք է հաշվի առնվեն/պահպանվեն ՀՀ կառավարության 31.08.2015թ. N 1093-Ն, 19.12.2019թ. N 1849-Ն, 25.05.2017թ. N 572-Ն և 26.12.2013թ. N 1521-Ն որոշումների, ինչպես նաև՝ այլ նմանատիպ իրավական ակտերի պահանջները:

**Ընդհանուր դրույթներ**

Համակարգը անհրաժեշտ է նախագծել և իրականացնել եռաստիճան ճարտարապետության սկզբունքով՝ ներկայացման, տրամաբանության և տվյալների մակարդակներով:

Համակարգը անհրաժեշտ է տեղակայել X86_64 կառուցվածքային ճարտարապետության համապատասխան սերվերային հարթակում:

Օգտվողների փոխազդեցությունը համակարգի հետ պետք է ապահովվի վեբ բրաուզերի միջոցով (ներառյալ, բայց չսահմանափակվելով Chrome 70 եւ ավելի, IE-11 եւ ավելի, FireFox-60 եւ ավելի):

Տվյալների շտեմարանի կառավարման համակարգը անհրաժեշտ է նախագծել ռելյացիոն (RDBMS)՝ անկախ արտադրողից:

**Պահանջներ սարքավորման նկատմամբ**

Սարքավորման տեխնիկական նկարագրությունը ներկայացնում է Կատարողը ( ստորև ներկայացված է առաջարկվող տարբերակը): Այն պետք է ապահովի համակարգի պահանջվող արագագործությունը և տվյալների ծավալը (նշված է 5.3 կետում), և բոլոր հանգույցները պետք է համապատասխանեն փոխանակման հետեւյալ պարամետրերին՝ RPO - 24 ժամ, RTO - մինչեւ 4 ժամ: